ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 20.07.1993

- Բաժին I Ընդհանուր դրույթներ
- Բաժին II Բորսայի հիմնադրումը, գործունեության կազմակերպումը եւ դադարումը
- Բաժին III Բորսային առեւտրի մասնակիցները եւ բորսային առեւտրի կազմակերպումը
- Բաժին IV Բորսաների գործունեության պետական կարգավորումը

Սույն օրենքը սահմանում է ապրանքային բորսաների ստեղծման եւ գործունեության, բորսային առեւտրի կազմակերպման պայմանները եւ դրանց իրավական երաշխիքները:

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Ապրանքային բորսա

Ապրանքային բորսան (այսուհետեւ՝ բորսա) իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկություն է, որն առեւտուրն իրականացնում է իր կողմից սահմանված կանոններով, որոշակի տեղում եւ ժամանակահատվածում՝ հրապարակային
սակարկությունների ձեւով:

Բորսան ստեղծվում է բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ձեւով, սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ ակտերով սահմանված կարգով:

Բորսան կարող է ունենալ մասնաճյուղեր եւ այլ առանձնացված ստորաբաժանումներ, որոնք ստեղծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բորսաները կարող են ստեղծել միություններ (ընկերություններ) իրենց գործունեության կոորդինացման, անդամների շահերի պաշտպանության եւ համատեղ ծրագրերի իրականացման, այդ թվում՝ բորսային սակարկությունների
համատեղ կազմակերպման նպատակով:

Հոդված 2. Ապրանքային բորսաների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Ապրանքային բորսաների (դրանց մասնաճյուղերի եւ այլ առանձնացված ստորաբաժանումների) գործունեության եւ բորսային առեւտրի կազմակերպման ու կարգավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն
օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ ակտերով, ինչպես նաեւ ապրանքային բորսաների հիմնադիր փաստաթղթերով:

Աշխատանքի, ֆոնդային բորսաների, ինչպես նաեւ մասնագիտացված եւ ունիվերսալ բորսաների ֆոնդային սեկցիաների (բաժինների ու բաժանմունքների) գործունեության հետ կապված հարաբերությունները սույն օրենքով չեն
կարգավորվում:

Հոդված 3. Բորսային գործունեությունը

Բորսան իրականացնում է բորսային առեւտրի կազմակերպման եւ կարգավորման հետ անմիջականորեն կապված գործունեություն:

Բորսան չի կարող իրականացնել այնպիսի առեւտրային, առեւտրամիջնորդային եւ այլ գործունեություն, որն անմիջականորեն կապված չէ բորսային առեւտրի կազմակերպման եւ կարգավորման հետ:

Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները բորսայի անդամների վրա չեն տարածվում:

Հոդված 4. «Ապրանքային բորսա» տերմինի օգտագործման սահմանափակումը

Սույն օրենքի 2 եւ 3 հոդվածների պահանջներին համապատասխանող ձեռնարկությունները, հիմարկները եւ կազմակերպությունները, ինչպես նաեւ դրանց մասնաճյուղերը եւ մյուս առանձնացված ստորաբաժանումները իրենց
անվանման մեջ «ապրանքային բորսա» տերմինը օգտագործելու, բորսային սակարկություն կազմակերպելու իրավունք չունեն եւ ենթակա չեն պետական գրանցման այն անվանմամբ, որը ներառում է այդ տերմինը ցանկացած բառակապակցություններով:

Հոդված 5. Բորսային ապրանք

Բորսային ապրանք է կոչվում այն ապրանքը, որը համապատասխանում է շրջանառությունից չհանված տվյալ ապրանքի տեսակին եւ որակին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին եւ բորսայի կողմից սահմանված կարգով թույլատրվել է բորսային առեւտրի:

Բորսային ապրանք է համարվում նաեւ բորսային ապրանքի վերաբերյալ պայմանագիրը եւ բեռնագիրը:

Բորսային ապրանք չեն կարող լինել անշարժ գույքը, մտավոր սեփականության օբյեկտները, հեղինակային իրավունքը, արվեստի ստեղծագործությունները, ինչպես նաեւ այն ապրանքները, որոնց շրջանառությունը (վաճառքը)
արգելված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 6. Բորսային առեւտուր

Բորսային առեւտուրը բորսայի կողմից սահմանված կարգով բորսային ապրանքի կազմակերպված, հրապարակային առուծախն է:

Հոդված 7. Բորսային գործարքներ

Բորսային գործարքը բորսայում գրանցված այն պայմանագիրն է, որը բորսային առեւտրի մասնակիցները բորսային ապրանքի վերաբերյալ կնքել են որպես այդ ապրանքի սակարկության արդյունք:

Բացի բորսային ապրանքի վերաբերյալ գործարքներից, բորսայում կարող են կատարվել նաեւ ֆորվարդային, ֆյուչերային եւ օպցիոն գործարքներ:

Բորսային գործարքների ձեւակերպման եւ գրանցման կարգը սահմանում է բորսան:

Այն գործարքները, որոնք կնքվել են բորսայում, բայց չեն համապատասխանում բորսային գործարքների ձեւակերպման եւ գրանցման կարգին, բորսային չեն: Բորսային երաշխիքներն այդպիսի գործարքների վրա չեն տարածվում:

Բորսան իրավունք ունի պատժամիջոցներ կիրառել բորսային առեւտրի այն մասնակիցների նկատմամբ, որոնք տվյալ բորսայում կնքել են բորսային առեւտրի կանոններին չհամապատասխանող գործարքներ:

Բորսային գործարքները չեն կարող կնքվել բորսայի անունից եւ նրա հաշվին:

Հոդված 8. Բորսային գործարքների տեսակները

Բորսային առեւտրի մասնակիցները բորսային սակարկությունների ընթացքում կարող են կնքել գործարքներ, որոնք կապված են՝

- իրական ապրանքի նկատմամբ իրավունքների եւ պարտականությունների փոխադարձ փոխանցման հետ.

- մատակարարման հետաձգված ժամկետով իրական ապրանքի նկատմամբ իրավունքների եւ պարտականությունների փոխադարձ փոխանցման հետ (ֆորվարդային գործարքներ).

- բորսային ապրանքի մատակարարման պայմանագրերի նկատմամբ իրավունքների եւ պարտականությունների փոխադարձ փոխանցման հետ (ֆյուչերային գործարքներ).

- բորսային ապրանքի կամ դրա մատակարարման պայմանագրի նկատմամբ իրավունքների եւ պարտականությունների ապագա փոխանցման իրավունքների զիջման հետ (օպցիոն գործարքներ).

- այլ գործարքներ, որոնք սահմանված են բորսային առեւտրի կանոններով:

Հոդված 9. Բորսային միջնորդություն

Բորսային առեւտրում միջնորդությունն իրականացվում է բորսային միջնորդի կողմից՝

- պատվիրատուի անունից եւ վերջինիս հաշվին, կամ պատվիրատուի անունից եւ իր հաշվին, կամ իր անունից եւ պատվիրատուի հաշվին բորսային գործարքներ կատարելու միջոցով (բրոքերային գործունեություն).

- հետագա վերավաճառքի նպատակով՝ իր անունից եւ իր հաշվին բորսային գործարքներ կատարելու միջոցով (դիլերային գործունեություն):

Բորսային միջնորդությունը բորսայի առեւտրում իրականացնում են բացառապես բորսային միջնորդները:

Հոդված 10. Բորսային միջնորդներ

Բորսային միջնորդներ են բրոքերային ձեռնարկությունները, բրոքերային գրասենյակները, անկախ բրոքերները:

Բորսային ձեռնարկությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ձեռնարկության կազմակերպական-իրավական որոշակի տեսակով գրանցված
ձեռնարկություն է, որն իրականացնում է բրոքերային եւ (կամ) դիլերային գործունեություն:

Բորսային գրասենյակը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված դուստր ձեռնարկություն է, որն իրականացնում է բրոքերային եւ (կամ) դիլերային գործունեություն:

Անկախ բրոքերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված անհատ ձեռներեց է, որն իրականացնում է բրոքերային եւ (կամ) դիլերային գործունեություն:

Բրոքերային ձեռնարկությանը, բրոքերային գրասենյակին, անկախ բրոքերին արգելվում է գործարքներ կնքել իրենց անունից եւ իրենց հաշվին, եթե նրանք ունեն միանման պայմաններով բորսայում չիրացված պատվերներ:

Հոդված 11. Բորսային բրոքերներ

Բորսային բրոքեր են հանդիսանում բրոքերային ձեռնարկությունների, գրասենյակի ծառայողները կամ ներկայացուցիչները, ինչպես նաեւ անկախ բրոքերները:

Հոդված 12. Բրոքերային միություններ (ընկերություններ)

Բորսային միջնորդներն իրավունք ունեն ստեղծել բրոքերային միություններ (ընկերություններ), այդ թվում՝ բորսաներին առընթեր:

Բրոքերային միությունները (ընկերությունները) ստեղծվում են հասարակական կազմակերպությունների ստեղծման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 13. Բորսային ծառայողներ

Բորսային ծառայողները այն ֆիզիկական անձինք են, ովքեր մասնակցում են բորսայի գործունեությանը աշխատանքային պայմանագրերի հիման վրա:

Բորսային ծառայողներին արգելվում է լինել բորսային գործարքների պայմանադիր կողմ, ստեղծել սեփական բրոքերային ձեռնարկություններ եւ բրոքերային գրասենյակներ, հանդես գալ որպես անկախ բրոքեր, ինչպես նաեւ՝ ծառայողական տեղեկատվությունն օգտագործել շահ ստանալու նպատակով:

ԲԱԺԻՆ II

ԲՈՐՍԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Հոդված 14. Բորսայի հիմնադրումը

Բորսան հիմնադրվում է Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձանց կողմից եւ ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բորսայի հիմնադիրներ չեն կարող լինել՝

- պետական իշխանության եւ կառավարման մարմինները.

- բանկերը եւ այլ ֆինանսավարկային կազմակերպությունները.

- ապահովագրական եւ ինվենստիցիոն ընկերությունները.

- հասարակական, հասարակական-քաղաքական, կրոնական եւ բարեգործական կազմակերպություններն ու հիմնադրամները.

- այն ֆիզիկական անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Հոդված 15. Բորսային առեւտրի կազմակերպման լիցենզիան

Բորսային առեւտուրը կազմակերպվում է լիցենզիայի առկայության դեպքում, որը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պետական լիազորված մարմնի կողմից:

Լիցենզիա ստանալու համար բորսայի հիմնադիրները պետական լիազորված մարմին ներկայացնում են՝

- դիմում.

- հիմնադիր պայմանագիր (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում).

- բորսայի կանոնադրությունը եւ բորսային առեւտրի կանոնները:

Պետական լիազորված մարմինը տալիս է լիցենզիա կամ գրավոր մերժում այն՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված փաստաթղթերի ստացման օրվանից 30 օրվա ընթացքում:

Լիցենզիա տալը կարող է մերժվել, եթե հիմնադիր փաստաթղթերը հակասում են սուն օրենքի եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ ակտերի պահանջներին:

Սահմանված ժամկետում պետական լիազորված մարմնի կողմից լիցենզիա չտալը կամ լիցենզիա տալը մերժելը բորսայի հիմնադիրների կողմից կարող է գանգատարվել դատական կարգով:

Հոդված 16. Բորսայի անդամները

Բորսայի անդամները կարող են լինել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք մասնակցում են բորսայի կանոնադրական ֆոնդի ձեւավորմանը, կատարում են բորսայի անդամության եւ այլ նպատակային մուծումներ եւ դարձել են բորսայի անդամներ՝ դրա հիմնադիր փաստաթղթերով նախատեսված կարգով:

Բորսայի անդամներ չեն կարող լինել՝

- այն ձեռնարկությունները, հիմարկները եւ կազմակերպությունները, որոնց ղեկավարները (ղեկավարների տեղակալներ կամ ձեռնարկությունների, հիմարկների եւ կազմակերպությունների մասնաճյուղերի եւ այլ առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ) տվյալ բորսայի ծառայողներ են.

- պետական իշխանության եւ կառավարման մարմինները.

- բանկերը եւ այլ ֆինանսավարկային կազմակերպությունները.

- ապահովագրական եւ ինվեստիցիոն ընկերությունները.

- հասարակական, հասարակական-քաղաքական, կրոնական եւ բարեգործական կազմակերպությունները եւ հիմնադրամները.

- ֆիզիկական այն անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Բորսայի անդամ իրավունք ունի՝

- մասնակցել բորսային առեւտրին.

- մասնակցել բորսայի կառավարմանը.

- ստանալ շահաբաժիններ, եթե դրանք նախատեսված են բորսայի հիմնադիր փաստաթղթերով.

- օգտվել բորսայի հիմնադիր փաստաթղթերով նախատեսված այլ իրավունքներից:

Բորսայի անդամին տրվում է բորսայի կանոնադրական ֆոնդի բաժնեմասի սեփականության վերաբերյալ համապատասխան վկայական:

Բորսայի անդամների կողմից բորսային առեւտրին մասնակցելու իրավունքի զիջում առանց կանոնադրական ֆոնդի բաժնեմասի սեփականության վկայականի վաճառքի կամ այլ ձեւով օտարման, ինչպես նաեւ բորսայի կառավարմանը
մասնակցելու իրավունքի զիջում չի թույլատրվում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Բորսայի անդամները կարող են բորսային առեւտրին մասնակցելու իրենց իրավունքը վարձակալության տալ միայն իրավաբանական կամ ֆիզիկական մեկ անձի: Վարձակալության պայմանագիրը ենթակա է գրանցման բորսայում: Բորսային առեւտրին մասնակցելու իրավունքի ենթավարձակալություն չի թույլատրվում:

Բորսայի անդամության դադարման, ինչպես նաեւ բորսայի անդամի իրավունքի լրիվ կամ մասնակի զիջման կարգը (այդ թվում վարձակալության ձեւով) սահմանվում է բորսայի կողմից՝ սույն հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերով
նախատեսված կարգին համապատասխան:

Բորսայի կողմից անդամության հաստատելը մերժելու, ինչպես նաեւ բորսայի անդամին անդամությունից հեռացնելու կամ անդամությունը դադարեցնելու մասին բորսայի որոշումները կարող են գանգատարկվել դատական կարգով:

Հոդված 17. Բորսայի կանոնադրությունը

Բորսայի կանոնադրությունը պետք է բովանդակի՝

- բորսայի անվանումը, ֆիրմային նշանը, իրավաբանական հասցեն.

- բորսայի գործունեության առարկան եւ նպատակները.

- բորսայի կազամակերպական կառուցվածքը, կառավարման եւ վերահսկողության մարմինները, դրանց իրավասությունը եւ որոշումների ընդունման կարգը.

- կանոնադրական ֆոնդի չափը եւ դրա ձեւավորման կարգը.

- բորսայի ֆոնդերի ձեւավորման եւ օգտագործման կարգը.

- բորսայի անդամների եւ բորսային առեւտրի մյուս մասնակիցների թվաքանակը սահմանելու կարգը.

-բորսային անդամակցելու, անդամության իրավունքը վարձակալելու, կասեցնելու եւ դադարեցնելու կարգը.

- բորսային առեւտրին մասնակցելու իրավունքի ձեռքբերման եւ դադարման կարգը.

- բորսայի անդամների եւ բորսային առեւտրի մյուս մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները.

- բորսայի կառավարման մարմինների ձեւավորման կարգը.